

ԵՐԱՆԱՇՆՈՐՎ ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐԶ ՀՕՐ
ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ
ՀՈԳԵՎԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ
ԼՈՍ ԱՆՃԷԼԸՍԻ ՄԷՋ

Կիրակի 8 Մարտ, 2020 տխուր օր մը եղաւ Լոս Անճէլըսի Պոլսահայ Համայնքին համար որովհետեւ իր շատ սիրուած եւ արժէքատու անբախտ Երանաշնորհ Պատրիարքին՝ Մեսրոպ Սրբ. Մուրաֆեանին վախճանման առաջին տարեկիցի առթիւ, Լոս Անճէլըսի Պոլսահայ Միութեան, Խաչատուրեան Դպրաց Դաս եւ Կոմիտաս Երգչախումբերու խնդանքով, ոգեկոչումի Հոգեհանգստեան Պաշտօն տեղի ունեցաւ:

Օրուան Սուրբ Պատարագը մատուցանեց Նիւ Եորքէ՝ Սուրբ Ներսէս Ընծայարանի Տեսուչ Արժ. Տ. Մարտիրոս Ա. Քհնյ. Չէվեան հետը ունենալով նոյն ընծայարանի ուսանող Բրշ. Թիմ Սրկ. Ազնատրեանը: Բարեխնամ Առաջնորդ Յովնան Ս. Տէրտէրեան ձամբորդած ըլլալուն չկրցաւ իր ներկայութիւնը բերել:

Երգեցողութիւնները կատարուեցան Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Առաք. Եկեղեցոյ մէջ սոյն եկեղեցոյ Դպրաց Դաս Երգչախումբի կողմէ՝ ղեկաւարութեամբ նորանշակ Տկն. Իրինա Կարապետեանի Եկմալեան եղանակով: Նոյն երգչախումբին իրենց մասնակցութիւնը բերին Խաչատուրեան եւ Կոմիտաս երգչախումբերու մաս մը անդամներ:

Ներկայ էին սոյն եկեղեցոյ Հովիւ Արժ. Տ. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեան եւ իրենց յարգանքի տուրքը ցուցաբերելու համար Պոլսահայ Միութեան, Խաչատուրեան եւ Կոմիտաս Երգչախումբի ներկայացուցիչներ ինչպէս նաեւ սգակիր պոլսահայեր:

Նախքան Հոգեհանգստեան Պաշտօնի երգեցողութեան Շնորհք Քհնյ. Տէմիրճեան հակիրճ խօսքերով Պատրիարք Հօր Վաստակին մասին հակիրճ տեղեկութիւն տուաւ:

Լոյսերու մէջ թող հանգչի մեր սիրելի Երաշնորհ Պատրիարք Հայրը: